ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 63-Լ

«17» 07 2024թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու և ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազի 1 թափուր հաստիքը կրճատելու ու ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91

հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանի 1-ին հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ բաժնի 11-րդ գլխի 40-րդ կետի «Վարչության դատախազ 3» բառերը փոխարինել «վարչության դատախազ 4» բառերով, «Ընդամենը 8» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով,

2) 2-րդ բաժնի 12-րդ գլխի 44-րդ կետի «Վարչության դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 3» բառերով, «Ընդամենը 10» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով,

3) 2-րդ բաժնի 14-րդ գլխի 52-րդ կետի «Վարչության դատախազ 8» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 9» բառերով, «Ընդամենը 11» բառերը՝ «Ընդամենը 12» բառերով, իսկ 15-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 126» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 127» բառերով,

4) 3-րդ բաժնի 17-րդ գլխի 64-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, «Ընդամենը 10» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով, իսկ 23-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 110» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 109» բառերով:

5) 6-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 126» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 127» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 110» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 109» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների

պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**